ոստիկանին եւ գտեալ համարձակութիւն առաջի նորա՝ չնարհիւ նորին արգելին զՀայս նաեւ յեկեղեցւոյն Բեթ-զեհէմի և յԱյրէն Ծննդեան, առին զբանալի հիւսիսային դրան, բարձին զկանթեղն յԱյրէն Ծննդեան, և սկսան բռնանալ 'ի վերայ սեփհական վանաց նոցին կառուցեալ անդ 'ի Բեթզեհէմ մերձ յեկեղեցին. սպառնային նոցա չմտանել 'ի Ս. Յարութիւն, կամելով բռնալ զաշտանակս 'ի Պատանատեղւոյն, խափանել զպաշտամունս և զարարողութիւնս՝ զոր կատարէին անդ։

Տեսեալ Թէոդորոս Պատրիարքի և միաբանացն Հայոց զայս ամենայն գործս եւ զհամարձակութիւնս Յունաց՝ տագնապեցան յոյժ, և անկեալ 'ի դրունս այլազգեաց աղաչէին զնոսա ձեռն տալ ինքեանց և չկորուսանել զսեփհական իրաւունս ազգին. ապա չոքան առ դատաւոր քաղաքին, և դանկատանօք պատմեցին նմա զանիրաւութիւնս Յունաց, զի բռնաբարութիւնք նոցին արտաքոյ էր Կայսերական հրամանին. զի կարգադրութիւնք սեփհականութեանցն Հայոց 'ի Ս. Տեղիս Կայսերական հրովարտակօք և վաւերեալ դրովք հաստատեալ էր. և զի վէճն Յունաց միայն էր ընդ Լատինս, և հրովարտակն գրեալ վասն բարւոքման վիճակի երկուց ազգաց էր եւ չգոյր 'ի նմա բառ ինչ վասն Հայոց. յետ ծանուցանելոյ զայսոսիկ՝ թախանձանօք խնդրեցին 'ի դատաւորէն՝ գրել և ծանուցանել 'ի Դուռն, զի վերստին դարձուսցեն առ Հայս զբանալի արտաքին դրան գերեզմանի Ս. Կուսին, կախել ըզջահս և զկանթեղս և մուծանել զամենայն սպասս եկեղեցւոյ, կատարել զպատարագս եւ զպաշտօնս ըստ նախնի սովորութեան՝ զորս խափանեցին Յոյնք, և տալ զբանալի հիւսիսային դրան Այրին Ծննդեան, որպէս ետուն Յունաց, եւ բառնալ զհակառակութիւնս նոցա որ վասն վանաց սենեկաց, եւ այլ անչարժ ստացուածոցն Հայոց 'ի Բեթզեհէմ. չխափանել զպատարագս և զպաշտօնս, զթափօրս և զայլ ամենայն արարողութիւնս 'ի տաճարին Սուրբ Յարութեան, չբառնալ զաշտանակս 'ի Պատանատեղւոյն. չփակել զՋրհորն անդ, չբռնանալ 'ի վերայ վանօրէից Ս. Յակոբայ, Ս. Փրկչի, Ս. Հրեշտակապետի, և Ս. Յովհաննէս եկեղեցւոյ։ Զայս ամենայն լուեալ դատաւորին